

**9-րդ դասարան**

**Ա. Աշխատանք բնագրով: (15 միավոր)**

Վերադառնալով Հայոց աշխարհ՝ իր թագավորության առաջին տարում Տրդատ Մեծը մեծ շքախմբով ուխտի է գալիս Եկեղյաց գավառի Երիզա ավանում գտնվող Անահիտ դիցուհու մեհյանը և զոհեր է մատուցում: Գինարբուքի ժամանակ Տրդատը հրաման է տալիս Գրիգորին, որ նա դրասանգներ և ծառերի թավ ճյուղեր տանի ու նվիրաբերի Անահիտի պատկերը կրող բազինին: Գրիգորի վճիռը, անտարակույս, աներկբա էր, պատասխանը՝ մերժողական: Տրդատը իր օթյակ է կանչում Գրիգորին և ասում. –Այսքան տարի դու հլու-հնազանդ ծառայել ես ինձ: Այժմն ինչու՞ իմ կամքը չես կատարում:

1. Հակիրճ գրե՛ք՝ ինչ գիտեք Անահիտ աստվածուհու մասին: Ներկայացրե՛ք հայոց դիցարանի մյուս աստվածներին:

2. Բացատրե՛ք **մեհյան**, **բազին**, **դրասանգ** բառերի իմաստները:

3. **Հրաման** բառի նմանողությամբ գրե՛ք բառեր, որոնք սկսվեն **հր** հնչյունախմբով (ոչ **հուր**-կրակ բառ): Նշե՛ք՝ որ լեզվից են վերցված այդ բառերը:

4. Բացատրե՛ք **օթյակ** բառի **օթ** արմատի նշանակությունը: Նույն արմատով բառաբարդման և ածանցման միջոցով գրե՛ք նոր բառեր (առնվազն 3 բառ) և նշե՛ք իմաստները:

5. Տեքստում գործածված բառերից ո՞ր բառերի հոմանիշներն են **խնջույք** և **ստույգ** բառերը:

6. Բառաբարդման և ածանցման միջոցով **ուխտ** արմատով կազմե՛ք բառեր (առնվազն 3 բառ):

7. **Տրդատ Մեծ** բաղադրյալ հատուկ անվան նմանողությամբ գրե՛ք հատուկ անձնանուններ, որոնց որոշիչն արտահայտված լինի որակական, հարաբերական ածականներով և թվականով (մեկական բառ):

8. Դո՛ւրս գրեք այն նախադասությունը, որի կազմում կա վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մաս: Ընդգծե՛ք այդ բառը և նշե՛ք խոսքիմասային պատկանելությունը:

**Բ. Շարադրություն՝ «Խիղճը չի մեռնում» վերնագրով (երկու էջի սահմաններում)**  
(5 միավոր):

**10-րդ դասարան**

**Ա. Աշխատանք բնագրով: (15 միավոր)**

Մատենադարանի տնօրենը թույլ տվեց, որ մտնենք ձեռագրապահոց: Հունգար գրողները տեսան մեր լավագույն գրչագրերը՝ մագաղաթյա ու թղթե, կիսով չափ հրդեհի ճարակ դարձած մատյաններ՝ սրբազան մասունքներ: Նրանք դողդոջուն քայլերով մոտեցան, ուխտավորի ջերմեռանդությամբ ձեռքերը դրեցին Մովսես Խորենացու, Գրիգոր Նարեկացու և էլի ուրիշ մեծերի հնագույն ձեռագրերի վրա:

Այցելեցինք Ծիծեռնակաբերդ՝ Մեծ եղեռնի հիշատակին կառուցած հուշարձան-կոթողը, «Հրագդան» մարզադաշտի կողքով անցանք և հասանք գլխավոր պողոտայի ակունքը, և մեր առջև վեր խոյացավ Մատենադարանը:

1. Նշե՛ք ճարակ բառը տեքստում ինչ իմաստով է գործածված: Գրե՛ք ընդգծված բառի համանունը և բացատրե՛ք նրանց իմաստները:

2. Գտե՛ք տեքստում գործածված դարձվածքը և բացատրե՛ք իմաստը:

3. Բացատրե՛ք գրչագիր և մասունք բառերի իմաստները:

4. Ձեռք և ակունք բազմիմաստ բառերի դիմաց գրե՛ք առնվազն երկու իմաստ:

5. Նշե՛ք ձեռագրապահոց և ձեռագիր բառերը ինչ իմաստով են գործածված տեքստում:

6. Ինչ կազմություն ունի մատենադարան բառը: Որտեղի՞ց և ո՞ր թվականին է Մատենադարանը տեղափոխվել Երևան: Գրե՛ք Երևանի Մատենադարանի ամբողջական անվանումը:

7. Հայերենի ո՞ր տարբերակով են ստեղծագործել Մովսես Խորենացին և Գրիգոր Նարեկացին: Գրե՛ք նշված հեղինակներին վերաբերող շրջասությունները:

8. Մեծ եղեռն բաղադրյալ հատուկ անվան նմանողությամբ գրե՛ք պատմական իրադարձությունների և տոների անուններ, որոնցում որոշիչներն արտահայտված լինեն որակական, հարաբերական ածականներով և թվականներով (մեկական օրինակ):

Բ. Շարադրություն՝ «Խիղճը չի մեռնում» վերնագրով (երկու էջի սահմաններում) (5 միավոր):

**11-րդ դասարան**

**Ա. Աշխատանք բնագրով: (15 միավոր)**

Ծերունի մի դերվիշ՝ ճակատն արևառ, եկավ եգիպտական անապատը, որ մեծ սֆինքսից հարցումներ անի երջանկության մասին: Բազմել էր հինավուրց սֆինքսը անդորր ու աներեր. նրա անթարթ աչքերը նայում էին խորհրդավոր հեռուները: Արձանացավ սֆինքսի առջև, խոհուն աչքերը մռայլ ճակատի տակից հառեց նրա աչքերին և ասաց.

– Եկել եմ մոտդ համայն աշխարհի բոլոր ծագերց, հարցում եմ արել՝ իմանալու, թե ինչ է երջանկությունը, և մնացել եմ անպատասխան: Քայլել եմ Նեղոսն ի վեր, տատասկները խոցել են սրունքներս, և հասել եմ քո դռանը: Բայց քո շրթունքը հավիտյան գոցված աշխարհի համար և քո աչքերը, ասա՛՜ ինչ որ տեսել ես դարերի շեղում , ասա՛՜ ինչ է մարդկային կյանքի երջանկությունը:

1. Հակիրճ գրե՛ք՝ հունական դիցաբանությունից ինչ գիտեք սֆինքսի մասին:
2. Գտե՛ք այն բառը ,որն ունի իր հարանունը: Գրե՛ք այդ բառերը և բացատրե՛ք նրանց իմաստները:
3. Նշե՛ք՝ **ծագ** բառը ինչ իմաստով է գործածված տեքստում: Գրե՛ք նշված բառի համանունը և բացատրե՛ք նրանց իմաստները:
4. Բացատրե՛ք **դերվիշ, տատասկ, շեղջ** բառերի իմաստները:
5. **Աչք** և **ճակատ** բազմիմաստ բառերի դիմաց գրե՛ք առնվազն երկու իմաստ:
6. Գտե՛ք այն բայը, որը **քար կտրել** դարձվածքի հոմանիշ բառն է :
7. Նշե՛ք՝ ինչ խոսքի մասի արժեք ունի **հեռու** բառը: Ուրիշ ինչ՞ խոսքի մասերի արժեք ունի ընդգծված բառը:
8. Տեքստի ո՞ր բառն է առաջացել գրաբարյան քարացած ձևից: Բացատրե՛ք ստուգաբանությունը:
9. Ուղղակի խոսքը հարստացրե՛ք վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերով:
10. Դու՛րս գրեք մեկական բառակապակցություն , որոնց բաղադրիչները կապված լինեն համաձայնությամբ և խնդրառությամբ:

**Բ. Շարադրություն՝ «Մեր վանքերը» վերնագրով (երկու էջի սահմաններում)**  
(5 միավոր):

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈԻԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2016

Տևողությունը 150 րոպե

12-րդ դասարան

**Ա. Աշխատանք բնագրով: (15 միավոր)**

Նստեց Սաադին ծաղկած հասմիկի տակ՝ Սպահանի գորգի վրա, բռնեց դողդոջ մատներով վարդենու նոր բացված կարմիր-կանաչ կոկոնը և մրմնջաց յուրովի. «Ինչպես մատաղ աղջիկը ժպտում է գգվող սիրեկանին, այնպես էլ վարդը իր շուրթերն է բացում առավոտյան հովիկին»: Երգում էին բլբուլները՝ գորշ զգեստ հագած և լուսեղեն աչուկներով, երգում էին իրենց դուրսի ռուբայաթները, երգում էին Սաադիի սրտի մեջ: Տեսավ Սաադին մրրիկների մեջ խոյացող ամեհի ելուզակներին՝ կայծակե թրերով, տեսավ բեղվիների նժույգների վազքը: Երկնքի երփնավառ պարտեզների միջից դուրս բխեց արեգակը, և հուրհրացին ամեն քար ու գուղձ, որովհետև գիշերը ադամանդի փոշի էր շաղ տվել նրանց վրա:

1. Նշե՛ք՝ ինչ իմաստով է գործածված **մատաղ** բառը: Գրե՛ք տրված բառի համանունը և բացատրե՛ք նրանց իմաստները:
2. Բացատրե՛ք **ռուբայաթ** և **բեղվին** բառերի իմաստները:
3. Տեքստից դու՛րս գրեք **հողակոշտ**, **ասպատակ** և **առինքնող** բառերի հոմանիշները:
4. Գրե՛ք դարձվածք, որը պարունակի **կարմիր-կանաչ** բարդությունը, և դարձվածքի իմաստն արտահայտե՛ք հոմանիշ բառով:
5. **Քար** և **սիրտ** բառերով գրե՛ք մեկական դարձվածք և բացատրե՛ք իմաստները:
6. Ո՞րն է **տվնջյան լուսատու** բառակապակցության հոմանիշ բառը տեքստում:
7. Նշե՛ք՝ **առավոտյան** բառը որ խոսքի մասի արժեքով է կիրառված: Ուրիշ ի՞նչ խոսքի մասի արժեք ունի ընդգծված բառը:
8. Գտե՛ք այն բառը, որի արմատը գրաբարյան քերականական ձև է : Բացատրե՛ք ստուգաբանությունը:
9. Ուղղակի խոսքը հարստացրե՛ք վերաբերմունքային իմաստ արտահայտող բառերով:
10. Դու՛րս գրեք մեկական բառակապակցություն, որոնց բաղադրիչները կապված լինեն համաձայնությամբ և խնդրառությամբ:

**Բ. Շարադրություն՝ «Մեր վանքերը» վերնագրով (երկու էջի սահմաններում)**  
(5 միավոր):